ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ ճարտարապետ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր ճարտարապետ Յուրի Սաֆարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտայի հ.18 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ ճարտարապետ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր ճարտարապետ Յուրի Սաֆարյանը ծնվել է 1937թ. սեպտեմբերի 17-ին, Երևանում:

1960 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1959-1964 թվականներին աշխատել է Հայպետնախագիծ ինստիտուտում, 1964-1990 թվականներին՝ Համամիութենական նախագծային փորձնական կոնստրուկտորային տեխնոլոգիաների ինստիտուտում: 1990-2020 թվականներին եղել է ԵՊՃՇՀ պրոռեկտոր, 1993 թվականից՝ ճարտարապետության տեսության, պատմության և հուշարձանների վերականգնման ամբիոնի վարիչ (համատեղությամբ):

Հեղինակ է քաղաքաշինական համալիրների, բնակելի և հասարակական շենքերի, այդ թվում՝ հեղինակային խմբի կազմում՝ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի, Երևանի «Նորաշեն» բնակելի զանգվածի, բնակելի շենքերի՝ Երևանում, Կաունասում (Լիտվա), Կալինինգրադում և Գրոզնիում (ՌԴ), Դարխանում (Մոնղոլիա), Պոդգորիցայում (Մոնտենեգրո), առողջարանային, համալիրների՝ Արզնիում, Գելենջիկում և Տիշկովոյում (ՌԴ), դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, մսուր-մանկապարտեզների համալիրների՝ Երևանում, համահեղինակ է ծածկերի բարձրացման եղանակով կառուցված բնակելի և հասարակական համալիրների նախագծերի:

Սաֆարյանը կարևոր դերակատարում է ունեցել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտական գործունեության կազմակերպման և զարգացման գործում: Նրա անմիջական նախաձեռնությամբ և ջանքերով 1991 թվականին կազմավորվել է դոկտորական և թեկնածուական գիտական աստիճան շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 029 «Ճարտարապետություն» մասնագիտական խորհուրդը, որը նախագահել է երկար տարիներ:

Սաֆարյանը եղել է ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում գիտահետազոտական ծրագրերի և թեմաների հեղինակ և ղեկավար, ճարտարապետության և քաղաքաշինության արդի խնդիրների վերաբերյալ 58 զեկույց է ունեցել միջազգային, հանրապետական և համամիութենական սիմպոզիումներում և գիտաժողովներում (Երևան, Ջերմուկ, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կիև, Խարկով, Օդեսա, Բաքու, Թբիլիսի, Վիլնյուս, Տալլին, Տաշքենդ, Բելգրադ, Բեռլին, Բուդապեշտ, Դարխան, Դենվեր, Հավանա, Թեհրան, Մարսել, Ֆլորենցիա, Պեկին: Տպագրել է 315 գիտական և նախագծային աշխատանքներ, այդ թվում՝ 3 մենագրություն, 15 գյուտ:

Պարգևատրվել է նախարարությունների, գերատեսչությունների, ճարտարապետների և շինարարների միությունների ավելի քան 40 մեդալներով և դիպլոմներով, այդ թվում՝

միջազգային, համամիութենական և հանրապետական մրցույթներում և ստուգատեսներում:

Յուրի Սաֆարյանը մահացել է 2022թ. օգոստոսի 22-ին, Երևանում:

Հայ ճարտարապետ Յուրի Սաֆարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտայի հ.18 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա կնոջ կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարելու է Յուրի Սաֆարյանի ընտանիքը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Յուրի Սաֆարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՅՈՒՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Յուրի Սաֆարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ